

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.....	10
5.1. Բյուջեի եկամուտներ	10
5.2. Բյուջեի ծախսեր.....	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք.....	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	15
6.1. Գնաճ	15
6.2. Ավանդներ և վարկեր	15
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	18
8. ԱՄՓՈՓՈՒՄ.....	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսությունում 2020 թվականի երրորդ եռամսյակը ևս ամփոփվել է անկումային ցուցանիշներով: Ավելին, սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված և շուրջ մեկ ամիս ընթացող լայնամասշտաբ պատերազմական գործողությունների պայմաններում բավական մշուշոտ են տնտեսական աշխուժացման հեռանկարները նաև չորրորդ եռամսյակում:


Սեպտեմբեր ամսին տնտեսական ակտիվության կուտակային անկումը շարունակել է խորանալ՝ չնայած այն հանգամանքին, որ որոշակիորեն մեղմվել է 12-ամսյա անկումը: Այսպես, սեպտեմբերին 12-ամսյա ՏԱՑ-ը կազմել է -7.5%՝ նախորդ ամսվա -9.8%-ի դիմաց: Միաժամանակ, հունվար-սեպտեմբեր ժամանակաշրջանի ՏԱՑ-ը գնահատվում է -6.6%՝ հունվար-օգոստոս ամիսների -6.4%-ի փոխարեն:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




Տնտեսական ակտիվության ցուցանիշի անկմանը հիմնականում նպաստել են առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար -4.3, -2.8 և -0.8 տոկոսային կետերով: Արդյունաբերությունը ձևավորել է դրական նպաստում, որի մեծությունը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ՝ 0.2 տոկոսային կետ: Հրապարակվել են նաև գյուղատնտեսության տվյալները, համաձայն որոնց 2020-ի առաջին 9 ամիսների կտրվածքով ոլորտի թողարկումը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 0.5%-ով և ձևավորել 0.05 տոկոսային կետի դրական նպաստում:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Սեպտեմբերին արդյունաբերական արտադրանքի ծավալների 12-ամսյա աճը փետրվար ամսից ի վեր առաջին անգամ եղել է դրական: Մասնավորապես, այս ցուցանիշը կազմել է 1.8%, որի ներքո ոլորտի՝ հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային աճը գնահատվել է շուրջ 1.0%՝ հունվար-օգոստոս ամիսների 0.9%-ի դիմաց:

Արդյունաբերական արտադրանքի ծավալների կուտակային աճը մեծ մասամբ պայմանավորված է հանքարդյունաբերության աճով: Այսպես, հունվար-օգոստոս¹ ամիսներին հանքագործական արդյունաբերությունը աճել է 17.3%-ով՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով 3.1 տոկոսային կետով: Հարկ է նկատել, սակայն, որ այս ենթաճյուղի դինամիկայում ևս նկատվում են դանդաղման միտումներ: Բավական է նշել, որ հունվար-հուլիս ամիսների աճը կազմել էր 20.9%, իսկ հունվար-հունիսինը՝ 24.3%: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ մշակող արդյունաբերության ենթաճյուղում կրկին գրանցվել է անկում՝ այս անգամ 3.2%-ով: Վերջինս ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է բացասաբար՝ -2.2 տոկոսային կետով:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ենթաճյուղում գրանցվել է աճ՝ 1.1%-ով, որը ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով: Ինչ վերաբերում է «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղին, ապա այն կրճատվել է 17.3%-ով՝ ձևավորելով -0.2 տոկոսային կետ բացասական նպաստում:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Թեև շինարարության ոլորտի կուտակային անկումը որոշակիորեն մեղմվել է, սակայն շարունակում է պահպանվել երկնիշ մակարդակում: Այսպես,

¹ Հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

հունվար-սեպտեմբեր ամիսներին շինարարությունը կրճատվել է 15.7%-ով՝ նախորդ ամսվա 19.1% անկման դիմաց: Այս փոքր դրական տեղաշարժը պայմանավորված է այն հանգամանքով, որ ոլորտի՝ սեպտեմբեր ամսվա թողարկումը գերազանցել է նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը (0.6%-ով):

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ի տարբերություն արդյունաբերության և շինարարության ոլորտների՝ ծառայությունների 12-ամսյա աճը եղել է բացասական, այն էլ՝ երկնիշ մեծությամբ: Հատկանշական է, որ նույնիսկ կարանտինային սահմանափակումների վերացումից հետո ոլորտում չեն նշմարվում վերականգնման միտումներ: Թեև սեպտեմբերին 12-ամսյա անկումը օգոստոսի համեմատ մեղմվել է 1.0 տոկոսային կետով և կազմել -18.3%, այդուհանդերձ, կուտակային անկումը շարունակել է խորանալ՝ հասնելով -11.7%-ի:


Հունվար-օգոստոս ամիսների տվյալներով² ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է «կացության և հանրային սննդի կազմակերպում», «տրանսպորտ», «վարչարարական և օժանդակ գործունեություն» և «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղերի անկմամբ, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար -4.4, -3.8, -1.7 և -1.3 տոկոսային կետ: Ծառայությունների անկմանը հակազդել են «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», ինչպես նաև «տեղեկատվություն և կապ»

² Հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

ենթաճյուղերը, որոնցից առաջինը աճել է 8.7%-ով և ձևավորել 1.9 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ երկրորդի 7.1% աճը հանգեցրել է 1.0 տոկոսային կետ դրական նպաստման:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ծավալները շարունակում են կրճատվել շոշափելի տեմպերով: Սեպտեմբերին ոլորտի 12-ամսյա անկումը կազմել է 10.8%՝ նախորդ ամսվա 14.8%-ի դիմաց: Ինչ վերաբերում է կուտակային անկմանը, ապա այն գնահատվում է 11.4%, ինչը մեծ մասամբ համադրելի է նախորդող 5 ամիսների անկման տեմպերին:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %




Արտահանման ծավալները շարունակում են նվազել, սակայն նշմարվում է դրական միտում՝ նվազման տեմպի դանդաղման տեսքով: Հունվար-սեպտեմբեր ամիսներին արտահանումը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 4.4%-ով՝ հունվար-օգոստոսի 5.7% անկման դիմաց: Այս դրական տեղաշարժը պայմանավորված է նաև նրանով, որ սեպտեմբերին արձանագրվել է արտահանման ծավալների 12-ամսյա աճ՝ 4.6%-ով:

Հունվար-օգոստոս ամիսների տվյալներով³ արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների» արտահանման 18.2%, «պատրաստի սննդի արտադրանքի» 10.7% և «մանածագործական արտադրանքի» 28.1% կրճատմամբ, որոնք ընդհանուր արտահանման աճին ունեցել են համապատասխանաբար 2.9, 2.4 և 2.0 տոկոսային կետերով բացասական նպաստում:

Արտահանման աճին 4.9 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել հանքահումքային արտադրանքի արտահանման 17.7% աճը: **Սա նշանակում է, որ առանց հանքարդյունաբերության հակազդեցության՝ արտահանման անկումը կլիներ զգալիորեն ավելի մեծ:** Աճ է գրանցվել նաև կենդանական և բուսական ծագման արտադրանքի արտահանման դինամիկայում՝ համապատասխանաբար 40.3% և 15.7%: Ընդ որում, այս ապրանքախմբերից յուրաքանչյուրը ձևավորել է 0.7 տոկոսային կետ դրական նպաստում:

³ Հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալները շարունակում են կրճատվել երկնիշ տեմպերով՝ արտահայտելով գնողունակության կորուստը բնակչության և տնտեսավարողների շրջանում: Հունվար-սեպտեմբեր ամիսներին ներմուծումը կրճատվել է 13.7%-ով՝ նախորդ ամսվա 12.6% անկման դիմաց: Ավելին, սեպտեմբերին ներմուծման 12-ամսյա անկումը կազմել է 20.4%՝ ավելի քան 3 անգամ գերազանցելով օգոստոսի 12-ամսյա անկումը:

Հունվար-օգոստոս ամիսների տվյալներով⁴ ներմուծման նվազումը հիմնականում պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման 62.1% կրճատմամբ, ինչը ընդհանուր ներմուծման անկմանը նպաստել է 6.8 տոկոսային կետով: Զգալի ազդեցություն են ունեցել նաև «թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղներ» (նվազումը՝ 49.7%) և «մանածագործական արտադրանք» (նվազումը՝ 24.0%) ապրանքախմբերի ներմուծման ծավալների անկումները, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար -2.6 և -1.4 տոկոսային կետ:

Ներմուծման ծավալների նվազմանը հիմնականում հակազդել են «բուսական ծագման արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի 6.5% և 4.7% աճերը, որոնցից յուրաքանչյուրի նպաստումը կազմել է 0.3 տոկոսային կետ:

⁴ Հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:


Նշենք նաև, որ ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել են արտահանման՝ հունվար-օգոստոս ժամանակահատվածի բոլոր ամիսների, ինչպես նաև ներմուծման՝ փետրվար, հունիս, հուլիս և օգոստոս ամիսների տվյալները: Գծապատկեր 7-ում և 8-ում ներկայացված են վերանայված ցուցանիշները:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 4.7%-ով, ինչը 1.2 տոկոսային կետով ցածր է 2019-ի հունվար-սեպտեմբերի համապատասխան ցուցանիշից: Ընդ որում, պետական հատվածում աշխատավարձն աճել է 7.4 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.2 տոկոսով⁵:

Հունվար-սեպտեմբեր ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 186,967.0 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 166,361.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 196,815.0 դրամ:



Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., հունվար-սեպտեմբեր, %




⁵ Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշի հաշվարկում (ապրիլից սկսած) ներառվել են նաև այն կազմակերպությունների տվյալները, որոնք COVID-19-ի հետևանքով աշխատողների մի մասին կամ ամբողջությամբ ուղարկել են չվճարվող հարկադիր պարապուրդի: Վերջիններիս աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն չեն վարձատրվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



ՌԴ ռուբլի/դրամ




2020 թվականի հունվար-սեպտեմբերին ՀՀ դրամի միջին փոխարժեքը շարունակել է արժեզրկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ: Նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ հունվար-սեպտեմբերին ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 0.6%: Հունվար-սեպտեմբերին դրամը արժեզրկվել է նաև եվրոյի նկատմամբ՝ կրկին 0.6%-ով: Միևնույն ժամանակ, նկատվում է ՀՀ դրամի արժևորման տեմպի արագացում՝ ՌԴ ռուբլու նկատմամբ. այս ցուցանիշը հունվար-սեպտեմբերին կազմել է 8.1%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Չնայած տնտեսական ակտիվության դիսկրետ (12-ամսյա) անկման տեմպի փոքր-ինչ մեղմմանը՝ բյուջեի հարկային եկամուտների նվազումը սեպտեմբերին խորացել է՝ նպաստելով ընդհանուր եկամուտների նվազման խորացմանը: Հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 6.4%-ով՝ նախորդ ամսվա 6.0%-ի փոխարեն: Հարկային եկամուտները և պետական տուրքերը նվազել են 5.8%-ով, որը 0.5 տոկոսային կետով ավելի խորն է, քան հունվար-օգոստոս ամիսների անկումը: Նույն ժամանակահատվածում պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները նվազել են 50.4%-ով, իսկ այլ եկամուտները՝ 10.0%-ով: Պաշտոնական դրամաշնորհների նվազումը հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի (հիմնականում՝ կապիտալ) ցածր կատարողականով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների աճը 2020 թվականին, %



Հունվար-սեպտեմբեր ամիսներին, հարկային եկամուտների նվազմանն ամենամեծ նպաստումն են ունեցել շահութահարկի (նվազումը՝ 17.5%), ԱԱՀ-ի (նվազումը՝ 5.9%) և մաքսատուրքի (նվազումը՝ 28.8%) անկումները, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի նվազմանը կազմել են համապատասխանաբար 2.4, 2.0 և 1.8 տոկոսային կետ։ Հարկ է նշել, որ շահութահարկի նվազումը և բացասական նպաստման խորացումը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով, ըստ որոնց, հարկատուները շահութահարկի կանխավճարները սեպտեմբեր ամսին հնարավորություն են ունեցել հաշվարկել և վճարել ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի շրջանառության հիման վրա, որը համավարակի պատճառով ամենախոր տնտեսական անկման ժամանակահատվածն է։


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, 2020թ.

	Հունվար-օգոստոս		Հունվար-սեպտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.3	-5.3	-5.8	-5.8
ԱԱՀ	-6.1	-2.0	-5.9	-2.0

Շահութահարկ	-15.9	-2.1	-17.5	-2.4
Եկամտային հարկ	1.8	0.5	1.9	0.5
Ակցիզային հարկ	1.9	0.1	1.7	0.1
Շրջանառության հարկ	-3.6	-0.1	-3.6	-0.1
Արտոնագրային հարկ	-98.7	-0.3	-98.8	-0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	5.1	0.2	2.8	0.1
Մաքսատուրք	-29.2	-1.8	-28.8	-1.8
Սոցիալական վճար	20.8	0.3	25.6	0.3
Այլ հարկային եկամուտներ	21.8	0.3	18.4	0.3
Պետական տուրք	-19.1	-0.5	-24.6	-0.7

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը սեպտեմբեր ամսին նվազել է՝ նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ կազմելով 1.0%: Հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընդհանուր պետական ծախսերն աճել են 16.8%-ով՝ կազմելով 1229.9 մլրդ դրամ:

Ծախսերի կուտակային աճի տեմպը նախորդ ամսվա նկատմամբ դանդաղել է 2.7 տոկոսային կետով, իսկ դիսկրետ (12-ամսյա) աճի տեմպը՝ 10.8 տոկոսային կետով:

Կապիտալ ծախսերի զգալի թերակատարումը շարունակվել է նաև սեպտեմբերին: Չնայած այն հանգամանքին, որ կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) աճի տեմպը եղել է բավական բարձր՝ 42.0%, դրանց ծավալը դեռևս ցածր է նույնիսկ հունվար-հունիս ամիսների ճշտված պլանից: Այսպես, 9 ամիսների ընթացքում իրականացված կապիտալ ծախսերի ծավալը կազմել է 101.7 մլրդ դրամ, մինչդեռ 6 ամսվա ճշտված պլանը կազմում է 118.2 մլրդ դրամ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պայմանավորված եկամուտների նվազմամբ և ծախսերի աճով՝ վերջին ամիսների ընթացքում մեծանում է պետական բյուջեի պակասուրդը: 2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջեի պակասուրդը կազմել է 154.8 մլրդ դրամ՝ նախորդ ամսվա նկատմամբ աճելով 14.4%-ով: Ընդ որում, պակասուրդի ցուցանիշը նույնպես չի համապատասխանում բյուջեի պլանին, քանի որ նույնիսկ 6 ամիսների համար բյուջեի ճշտված պլանով նախատեսվել էր 193.5 մլրդ դրամ պակասուրդ: Սակայն, դա հիմնականում պայմանավորված է ոչ թե ծախսերի խնայողաբար օգտագործմամբ, այլ կապիտալ ծախսերի թերակատարմամբ:

5.4. Պետական պարտք

2020թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7,854.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ աճելով 11.4%-ով: Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքը սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 7,374.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով


12.8%-ով: Աճը տեղի է ունեցել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքի հաշվին, որոնք աճել են համապատասխանաբար 9.2%-ով և 24.8%-ով:

Նախորդ ամսվա նկատմամբ կառավարության պարտքը նվազել է 107.9 մլն ԱՄՆ դոլարով (75.2 մլն դոլարով՝ արտաքին և 32.7 մլն դոլարով՝ ներքին պարտքի նվազման հաշվին) կամ 1.4%-ով: Կառավարության պարտքի նվազումը հիմնականում տեղի է ունեցել 2020թ. մարման ենթակա եվրապարտատոմսերի մնացորդային մասի մարման արդյունքում (հիշեցնենք, որ 2020թ. մարման ենթակա էին մոտ 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով եվրապարտատոմսեր, որոնց զգալի մասը մարվել էր 2019թ. սեպտեմբերին եվրապարտատոմսերի նոր ծավալի տեղաբաշխման միջոցով):

2020թ. ընթացքում (2019թ. դեկտեմբերի համեմատ) ՀՀ կառավարության պարտքն աճել է 542.5 մլն ԱՄՆ դոլարով, որից 201.5-ը՝ արտաքին, իսկ 341.1 մլն դոլարը՝ ներքին պարտքի հաշվին:

Նշենք նաև, որ համաձայն ՀՀ կառավարության գնահատականների՝ 2020-ին կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կհասնի շուրջ 67%-ի՝ կապված ռազմական գործողությունների պայմաններում տնտեսական ակտիվության նվազման, ինչպես նաև ընթացիկ ծախսերի աճի հետ (շուրջ 40 մլրդ դրամի չափով):


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



ՀՀ-ում սեպտեմբերին ևս արձանագրվել է թույլ գնաճային միջավայր, ինչը հետևանք է ցածր տնտեսական ակտիվության և թույլ պահանջարկի: Սեպտեմբերին սպառողական գները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են միայն 1.4%-ով՝ նախորդ ամսվա 1.8%-ի դիմաց: Նպատակ ունենալով խրախուսել տնտեսական ակտիվությունը՝ ԿԲ-ն սեպտեմբերին նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 4.25%:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը դանդաղել է նախորդ ամսվա նկատմամբ և կազմել 9.1%:


Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումները ավանդների 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ



Ավանդների աճի կառուցվածքում շահույթ չհետապնդող կազմակերպություններից ներգրավված ավանդների նպաստման չափը նախորդ ամսվա համեմատ աճել է 0.1 տոկոսային կետով, իսկ ծեռնարկություններից ներգրավված ավանդներինը մնացել է անփոփոխ՝ 1.9%: Մյուս բոլոր բաղադրիչները սեպտեմբերին ձևավորել են ավելի փոքր նպաստում, քան օգոստոսին: Մասնավորապես, տնային տնտեսություններից ներգրավված ավանդների նպաստումը նվազել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 4.8%: Վերջինս, սակայն, շարունակում է մնալ որպես ավանդների աճի հիմնական գործոն: Բացի այդ, էապես նվազել է նաև ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների նպաստումը՝ նախորդ ամսվա 3.1%-ի փոխարեն կազմելով 0.4%:


Վարկերի աճի տեմպը փոքր-ինչ դանդաղել է, սակայն շարունակում է մնալ բարձր: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 19.2%-ով՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ նվազելով 0.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Վարկերի աճին հիմնականում նպաստել են հիպոթեքային, սպառողական, ծառայությունների և արդյունաբերության ոլորտներին տրամադրվող վարկերը՝ համապատասխանաբար 3.7, 3.5, 3.3 և 3.0 տոկոսային կետերով: Նկատենք, որ նախորդ ամսվա համեմատ նվազել է սպառողական վարկերի նպաստման չափը, ինչը փոխհատուցվել է բիզնես վարկավորման, մասնավորապես՝ արդյունաբերության, ծառայությունների, շինարարության ոլորտներին ուղղված վարկերի ազդեցության աճով:


Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ



7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Օգոստոսին և սեպտեմբերին կորոնավիրուսի տարածումն ընթացել է մեծ մասամբ կառավարելի միջակայքերում: Օգոստոսին նոր դեպքերի միջին օրական ցուցանիշը կազմել է 169, որի արդյունքում ընդհանուր հաստատված դեպքերի թիվը ավելացել է 5,231-ով: Ցուցանիշները փոքր-ինչ վատթարացել են սեպտեմբեր ամսին՝ միաժամանակ շարունակելով մնալ էապես ցածր հունիս-հուլիսյան բարձրակետից: Մասնավորապես, սեպտեմբերին ընդհանուր առմամբ հայտնաբերվել է 6,578 վարակակիր՝ օրական միջին հաշվով 219 նոր դեպքերով:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության դեպքերը



Այդուհանդերձ, հոկտեմբերի կեսերից երկրում ձևավորվել է չափազանց ծանր և լարված համաճարակային իրավիճակ: Այսպես, հոկտեմբերի 14-ին օրական վարակվածների թիվը առաջին անգամ դարձել է քառանիշ՝ կազմելով 1,058: Իսկ հոկտեմբերի 23-ին սահմանվել է նոր հակառեկորդ՝ 2,474 հաստատված դեպքերի ցուցանիշով: Արդյունքում հոկտեմբերի 14-ից 26-ն ընկած ժամանակահատվածում ընդհանուր հաստատված դեպքերի թիվը աճել է 21,244-ով՝ կազմելով 78,810:

Հոկտեմբերի 27-ի դրությամբ՝ Հայաստանը 1 մլն բնակչի հաշվով դեպքերի թվով զբաղեցնում է աշխարհում 14-րդ հորիզոնականը: Առավել բարենպաստ դիրքերում են գտնվում այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իտալիան, Շվեդիան, Ռուսաստանը, Իսպանիան, Բրազիլիան: Վերհիշենք, որ այս երկրները կորոնավիրուսային շոկի սկզբնական փուլում արձանագրել էին ամենամեծ կորուստները: ՀՀ-ում իրավիճակը խնդրահարույց է նաև 1 մլն բնակչի հաշվով

մահերի թվով. հոկտեմբերի 27-ի դրությամբ՝ Հայաստանը այս ցուցանիշով աշխարհում 23-րդն է:

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Սեպտեմբերին տնտեսական ակտիվության կուտակային անկումը շարունակել է խորանալ՝ չնայած այն հանգամանքին, որ որոշակիորեն մեղմվել է 12-ամսյա անկումը:** Մասնավորապես, հունվար-սեպտեմբեր ժամանակաշրջանի ՏԱՑ-ը գնահատվել է -6.6%՝ հունվար-օգոստոս ամիսների -6.4%-ի փոխարեն: Սեպտեմբերի ավարտին բացասական գործոններին գումարվել է Ադրբեջանի սանձազերծած պատերազմը՝ իր կործանարար դրսևորումներով: Այս պայմաններում բավական շոշափելի են տնտեսության բացասական միտումների պահպանման ռիսկերը:

2. **Պետական բյուջեի պակասուրդի աճը չի ուղեկցվում տնտեսական աճին նպաստող ծախսերի աճով:** 2020թ. ընթացքում, պայմանավորված հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ, բյուջեի պակասուրդի մեծացումն արդարացված է: Սակայն, Հայաստանի դեպքում, պետական պարտքի արդեն բավական բարձր մակարդակներում, բյուջեի յուրաքանչյուր լրացուցիչ ծախս պետք է ուղղված լինի տնտեսական աճին նպաստող ծրագրերի ֆինանսավորմանը՝ պարտքի կայունության ապահովման նպատակով: Սակայն, այն հանգամանքը, որ ընթացիկ տարվա 9 ամիսների ընթացքում կապիտալ ծախսերը, որոնք հենց հետագա տնտեսական աճին նպաստող միջոցառումներն են, չեն կատարվել նույնիսկ 6 ամիսների համար նախատեսված չափով, խոսում է այն մասին, որ բյուջեի պակասուրդի արագ աճը խնդրահարույց է և առաջիկա տարիների համար կստեղծի վտանգներ պարտքի կայունության տեսանկյունից:

3. **Հոկտեմբերի կեսերից երկրում ձևավորվել է չափազանց ծանր և լարված համաճարակային իրավիճակ:** Հոկտեմբերի 14-ին օրական վարակվածների թիվը առաջին անգամ դարձել է քառանիշ՝ կազմելով 1,058: Հոկտեմբերի 23-ին սահմանվել է նոր հակառեկորդ՝ 2,474 հաստատված դեպքերի ցուցանիշով: Արդյունքում, հոկտեմբերի 14-ից 26-ն ընկած ժամանակահատվածում ընդհանուր հաստատված դեպքերի թիվը աճել է 21,244-ով՝ կազմելով 78,810: Սա նշանակում է, որ համավարակի տարածումը դուրս է եկել վերահսկողությունից՝ վտանգելով պատերազմող երկրի առողջապահական համակարգի կայունությունը: Ակնհայտ է, որ վերջինս, իր հերթին, կունենա զսպող ազդեցություն տնտեսական զարգացումների վրա:

4. **Ստեղծված պայմաններում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ֆինանսական համակարգի կայունությանը:** Ընդ որում, այս

հանգամանքը կարևոր է ոչ միայն բանկերի և այլ վարկային ինստիտուտների ֆինանսական «առողջության» պահպանման, այլև տնտեսության իրական հատվածի բնականոն զարգացումը վերականգնելու տեսանկյունից: Մի կողմից՝ բանկերի հնարավոր դեֆոլտը էական կորուստներ կպատճառի ավանդատուներին՝ փոշիացնելով նրանց խնայողությունները և այդպիսով սահմանափակելով ներդրումների աղբյուրները: Մյուս կողմից՝ ֆինանսական կայունության խաթարումը կհանգեցնի վարկավորման ծավալների կրճատման՝ տնտեսավարողներին զրկելով ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ իրացվելիությունից: Այս սցենարների նյութականացման պարագայում տնտեսական անկումը ՀՀ-ում ոչ թե կմեղմվի, այլ կխորանա, և տնտեսական համակարգերը (ձեռնարկությունները, ոլորտները) կհայտնվեն փակ, արատավոր շղթայում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: